11 ᵇ] և ինոյն բնակեաց. և վասն այնորիկ զանցաւորս արհամարհեաց, առնելով և ուսուցանելով՝ զի մեծ կոչեսցի ի սեփհական ժառանգութիւնն. ուր են հաւքն ա և նախնիք նորա, զի որոց զկնի հետևեաց՝ նոցա է ստուգապէս զարմ և զաւակ։ Նախահարքն, նահապետացն, բ հայրապետացն, քահանայիցն, դատաւորացն, աւգոստէիցն, տեսանողացն, աւետարանչացն, առաքելոցն, հովուացն, և վարդապետացն և համայն հոգևոր լրման ի միասին հաւաքելոց ընդ ամենեսեան և այժմու գովեցեալս։ Ընդ ոմանս նախանձեցաւ՝ և յոմանց խուն ինչ վերջացաւ, եթէ ոչ յանդգնութիւն է ասել և գերազանցեաց և.ս. ոմանց բանին, կիսոց գործոյն, այլոց հեզութեանն, ոմանց նախանձուն, յոլովից վտանդիցն, ոմանց առաւել՝ և կիսոց համայնի նմանեաց. և այլ յայլմէ զգեղեցկութիւնն ընկալաւ՝ որպէս որք զանդրիանդս գերազանցութեամբ զրեն։ Մի առաքինութեան տեսակ յամենեցուն հաւաստացոյց. դրժնէիցն բանիւ՝ գերազանցեաց գործով, և գործաւնէիցն՝ բանիւ յաղթեաց. քան զորս զերկոսեանն ունէին՝ միոքն յոլովեաց, և քան զորս ի միումն ծայրագոյնք՝ բազմաւքն զանց արար։ Եւ եթէ

ա. Ձեռ. հավքն«

բ. Ձեռ. նախապետաց։